

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/3

6 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ավիատրանս Հյուրանոց» ՓԲԸ վարչական բողոքը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.09.2015 թ-ի թիվ 6114016 ակտի դեմ:

#### **«Ավիատրանս Հյուրանոց» ՓԲԸ բողոքում բերված փաստարկները.**

22-ը օգոստոսի 2015 թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչության պետի կողմից 18.08.2015 թ-ին տրված թիվ 6114016 հանձնարարագրի շրջանակներում «Ավիատրանս Հյուրանոց» ՓԲԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 25.08.2015 թ-ին կազմվել է թիվ 6114016 ակտի նախագիծը, իսկ 02.09.2015 թ-ին՝ թիվ 6114016 ակտը:

Ընկերությունը գտնում է, որ թիվ 6114016 ակտն անվավեր է հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի թիվ 846-Ն որոշման թիվ 1 Հավելվածի 13-րդ կետի. «ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝ ... 9) ապրանքի (ծառայության) անվանումը.

10) գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը.»:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին կետի. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Ստուգման ակտով արձանագրվել է, որ Ընկերության կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 2013 թվականի թիվ 846-Ն որոշման թիվ 1 Հավելվածի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված պահանջները, ինչը առաջացրել է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված 2-րդ կետով:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով հանրային սննդի ծառայություն նշանակում է՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր: Նշված հանրային սննդի ծառայություն եզրույթը բերված է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թ-ի սեպտեմբերի 19-ի թիվ 875-Ն հրամանի հավելվածում:

22.08.2015թ-ի ՀԴՄ կտրոնով որպես ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ Ընկերության կողմից հստակ նշված է «հանրային սննդի ծառայություն», ինչը հանդիսանում է ՀՀ կառավարության 2013 թվականի թիվ 846-Ն որոշման թիվ 1 հավելվածի 13-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջի կատարում և միանշանակ հերքում է այս մասով ստուգման ակտով տրված մեկնաբանումը:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի դրույթներով՝ որոշման թիվ 1 հավելվածի 13-րդ կետի 10-րդ ենթակետը առհասարակ չի վերաբերում և կիրառելի չէ Ընկերության կողմից իրականացվող գործունեության մասով, քանի որ տառացի մեկնաբանելով վերջինս նշում է ապրանքի քանակ և չափման միավոր

եզրույթը, իսկ ինչպես արդեն վերը բերվեց, Ընկերությունը զբաղվում է բացառապես ծառայությունների մատուցմամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2013 թվականի թիվ 846-Ն որոշման թիվ 1 հավելվածի 13-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներն, անգամ նման կերպ մեկնաբանելու պայմաններում վիճարկվող ՀԴՄ կտրոնում Ընկերության կողմից պատշաճ ապահովված են, որպես չափման միավոր նշված է «գործարք», իսկ քանակ՝ «1»: Տվյալ դեպքում առավել քան անհասկանալի է ակտով կատարված մեկնաբանությունները սույն մասով նույնպես:

Վերոգրյալից ակնհայտ է, որ կատարված ստուգման հիման վրա 02.09.2015 թ-ի ստուգման ակտի կազմումը կատարվել է սույն բողոքով սահմանված իրավական ակտերի սխալ մեկնաբանությամբ և խախտումով:

Հիմք ընդունելով սույն բողոքով բերված փաստական հանգամանքները ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.09.2015 թ-ին կազմված թիվ թիվ 6114016 ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 18.08.2015 թ-ի թիվ 6114016 հանձնարարագրի համաձայն «Ավիատրանս Հյուրանոց» ՓԲԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.09.2015 թ-ի թիվ թիվ 6114016 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Արթուր Կարապետյանի կողմից 22.08.2015 թ-ին ժամը 13:52-ին ք.Երևան, Աբովյան 4 հասցեում գտնվող հյուրանոցային համալիրից կատարվել է 3900 դրամի գնում՝ 1 հատ սուրճ 600 դրամ արժեքով, 1 հատ «Պելե» սուրճ 800 դրամ արժեքով, 1 հատ ջուր 500 դրամ արժեքով, 2 հատ պաղպաղակ 2000 դրամ արժեքով, որոնց դիմաց վճարումները կատարվել են կանխիկ դրամով: Ադմինիստրատոր Զարուհի Գեղամյանը գումարը մուտքագրել է ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն է տրամադրել: Ստագմամբ պարզվել է, որ ընկերության 2013 թ-ի իրացումից հասույթը (ներառյալ ԱԱՀ) գերազանցում է 58.35 մլն դրամը: ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված N 1-ի 13-րդ կետի 9 և 10 ենթակետերի համաձայն ՀԴՄ կտրոններում պետք է տպագրված լինի ապրանքի անվանումը, գնվող ապրանքի քանակը և չափման միավորը: Տրամադրված կտրոնում բացակայում էին վերոնշյալ վավերապայմանները: Նույն որոշման հավելված N 2-ի 40-րդ կետի համաձայն օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով կատարվել է ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում:

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում ստուգման ընթացքում ընկերության հյուրանոցային համալիրից կատարվել է 3900 դրամի գնում, մասնավորապես՝ գնվել է 1 հատ սուրճ 600 դրամ արժեքով, 1 հատ «Պելե» տեսակի սուրճ 800 դրամ արժեքով, 1 հատ ջուր 500 դրամ արժեքով և 2 հատ պաղպաղակ 2000 դրամ արժեքով:



Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 13-րդ կետով հստակ սահմանված է. «ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

...

9) ապրանքի (ծառայության) անվանումը.

10) գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը.»:՝

Իր հերթին, ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի 40-րդ կետի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

1) որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անզեն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը).»:՝

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով տրված են հանրային սննդի ծառայության հիմնական հասկացությունները.

1) հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

2) հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

3) խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

4) ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

5) վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:

Վերոնշյալից ակնհայտ է, որ «հանրային սննդի ծառայություն» հասկացությունը վաճառողի կողմից գնորդին մատուցվող ծառայությունների համալիր է, այլ ոչ թե առանձին ծառայության կոնկրետ փուլեր: Ընդ որում, ծառայությունների համալիրը վաճառողի կողմից պարտադիր մատուցվում է ըստ սպառողին ներկայացված ճաշացուցակի, որը ներառում է ինչպես խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, այնպես էլ գնովի ապրանքների ցուցակը (ըստ զանգվածի՝ գնի պարտադիր նշումով): Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ օրենքի իմաստով վաճառող է հանդիսանում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպողը (հանրային սննդի համալիր ծառայությունների մատուցման կազմակերպողը):

Մյուս կողմից, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N874-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 56-րդ «Հանրային սննդի կազմակերպում» հատվածը ներառում է անմիջական փեղում սպառման համար պատրաստի կերակրատեսակների, ինչպես նաև կերակրատեսակների հեղուկ մատուցվող խմիչքների վաճառքը և սպասարկումը ռեստորաններում, սրճարաններում, այդ թվում՝ ինքնասպասարկման կամ պատրաստված սննդի դուրս տանելու հնարավորությամբ, վաճառասեղանի կանգնակի մոտ, նստելատեղերով կամ առանց նստելատեղերի:

Հաշվի առնելով վերոնշյալը, ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 13-րդ կետի 9-րդ ենթակետին համապատասխան՝ ՀԴՄ կտրոնի վրա պետք է արտացոլվի հանրային սննդի կազմակերպման շրջանակներում հանրային սննդի համալիր ծառայությունների թվում ներառվող հանրային սննդի յուրաքանչյուր կոնկրետ ծառայության տեսակի անվանումը՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ վաճառողի կողմից սպառողին առաջարկված **ճաշացուցակի** (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի ապրանքների ցուցակ):

Քննարկվող դեպքում ստուգմամբ արձանագրվել է մատուցված ծառայության դիմաց տրամադրված կտրոնի վրա ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 13-րդ կետով սահմանված տվյալների բացակայության փաստ, ինչը նույն որոշման հավելված N 2-ի 40-րդ կետի համաձայն դիտվում է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 02.09.2015 թ-ի թիվ 6114016 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ